

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Աղբ

V դ. հայ մատենագրության մեջ հանդիպող, բարբառներում լայնորեն տարածված և բազմաթիվ ածանցյալներ ունեցող այս բառը Հ. Աճառյանը ծագած է համարում «կովկասյան աղբյուրից»՝ բերելով լազերեն (ճաներեն) lebi «կեղտ», lebiari, leboni «աղտոտ, կեղտոտ», ulebu «կեղտոտող» զուգահեռները և որպես աղբյուր նշելով իր «Etude sur la langue laze» աշխատությունը (Paris, 1899, էջ 37)։ «Հայերենը շունենալով բառակազմում դ, — գրում է նա, — ըստ օրինի ավելացրել է նախաձայն ա, բայց առանց նախաձայնի ձևը պահված է գավառականում. այսպես Ղրբ. լեպ «դիրտ, մրուր, հիվանդության ժամանակ լեզվի վրա գոյացած կեղտը», լեպլաճ ածառ հիվանդ հետո տակը մնացած դիրտը», լեպալալել «ցեխոտել, հիվանդության պատճառով կեղտ կապել»։ Այս բառը թեև կա վրացերենում, բայց լազերենը հայերենից փոխառյալ չէ, ինչպես ցույց է տալիս նախաձայն ա-ի բացակայությունը։ Հայերենը փոխառյալ է այժմ կորած կովկասյան մի լեզվից, որին ի դեպ է քալիս այն հանգամանքը, որ բառի ավելի նախնական ձևը (լեպ) այժմ էլ գործածական է միայն Ղարաբաղի բարբառում»¹։

Ծղած մյուս ստուգաբանություններից ուշադրության արժանի է է. լիդենի և Պետերսոնի փորձը՝ բառը բխեցնելու հ.-հ. *el-/ol- արմատից, որի համար այժմ տրվում է «մզլել, նեխել, հոտել» իմաստը (ըստ Հ. Աճառյանի՝ «թրջել»)։ սրանով իսկ բառը կապվում է աղբ բառի հետ, և բ-ն ու տ-ն դիտվում են որպես աճականներ։ Այս ստուգաբանությունն ընդունում է Յ. Պոկոռնին²։

Մեր «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» աշխատության մեջ (Երևան, 1970, էջ 146) աղբ-ը համեմատված է խեթ. šalpa- (šalpi-) «կղկղանք» բառի հետ, միայն թե նշված է, որ այս բառերի «միասնական հնդեվրոպական ծագումը չի ապացուցված»։ Այժմ մեզ հայտնի է խեթ. բառի նոր ստուգաբանություն. այն հատկացվում է հ.-հ. *selp- «ճարպ» արմատին³։ Սրանով իսկ ոչ միայն հաստատվում է մեր նշած զուգահեռը, այլև

¹ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 12, Երևան, 1971, էջ 124 (այսուհետև՝ ՀԱԲ)։

² Հմմտ. J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I, 1959, էջ 305 (այսուհետև՝ IEW)։

³ Հմմտ. А. А. Королев, Хетто-лувийские языки («Языки Азии и Африки», I, М., 1976, էջ 26)։

ներևում է տվյալ արմատին պատկանող բառերի մեջ խեթերեն ու հայերեն բառերի մերձավոր իմաստային կապը, ճշտվում է հայերեն աղբ-ի բուն *s|p- նախածեր, և պարզ է դառնում բառի իմաստային այն առումների նախնականությունը, որոնք Հ. Աճառյանը երկրորդական է համարում՝ գրաբար աղբել «հողը աղբով պարարտացնել», բարբառային ախբ (Ալշ., Կր., Սեբ.), ախպ (Ախց., Եր.), ախի (Ողմ, Ռոդ., Վան) «պարարտություն»:

Հ. Աճառյանի ստուգաբանության՝ բավարար չափով հիմնավորված չլինելը ակնհայտ կդառնա, եթե հատկապես նկատի առնենք հետևյալ հանգամանքները. 1) լազերենից կամ նրան ցեղակից «կովկասյան մի լեզվից» ծագած բառը դժվար թե այդքան լայն տարածում ունենար. 2) Հ. Աճառյանի ենթադրությունը ինչ-որ կովկասյան կորած լեզվի առկայության մասին հիմնավոր չէ. արդի քարթվելագետները նշում են հայերեն բառին մոտ քարթվելական (և ոչ թե միայն լազական) երկու արմատ՝ *lap-/*lp- «ցեխ, կավ» (հմտ. վրաց lap- «ցեխ», մեգր. lp- «կավոտվել») և *lb- «փափկացնել, խոնավացնել» (վրաց. lb-, մեգր. lib-, ճան. lib-, lob-)⁴: Սրանցից առաջինը Վ. Իլիշ-Սվիտիշը հատկացնում է նոստրատիկական lip'a «կաշուն» արմատին և համեմատում հ.-ե. *leip «կաշել, կաշուն, քսել» արմատի հետ⁵:

Աղբ արմատից պետք է լիովին առանձնացնել Ղարաբաղի բարբառի լեպ-ը, որ Հ. Աճառյանը համարում է նրա տարբերակը՝ Ի միջի այլոց, այն քարթվելական աղբյուրից բխեցնելը նույնպես կասկածելի է, եթե նկատի առնենք նախ՝ Ղարաբաղի բարբառի տարածական հեռավորությունը Ֆաներենից և երկրորդ՝ լեպ արմատի լոպ տարբերակի առկայությունը, որի թ/օ հերթագայությունը ենթադրել է տալիս հնդեվրոպական արմատ՝ Մեր «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ (Երևան, 1972, էջ 295—296) լեպ «լեզվի վրայի կեղտ, դիրտ», լեպանգ, լոպանգ «դիրտ, մրուր, օճառի եփելուց հետո մնացած տակի կեղտը», լոպոպ «ջրալի ցեխ» բառերի մեջ հանդես եկող լեպ/լոպ արմատը համեմատված է շվեդ. slabb «կեղտոտել», շվեդ. բրբռ. slabb «ցեխաջուր», դերմ. Schlamm «տիղմ, ցեխ, կեղտ» բառերի հետ և բխեցված *(s)le(m)b/p- «թուլլ կախվել» արմատի *(s)leb-/*(s)lob- տարբերակներից: Անհնար չէ, իհարկե, ենթադրել նոստրատիկական ինչ-որ աղբյուր (ուրարտերենը):

Բումբ

Այս բառը հայ հին մատենագրության մեջ չի գործածված: Հանդիպում է միայն Ստեփանոս Լեհացու «Բառագիրք ընդարձակ և բազմավաստակ» (XVII դ.) և Նորայր Բյուզանդացու «Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն» (Կ. Պօլիս, 1884) աշխատություններում՝ «սրունքի մսոտ մաս» իմաստով: Հստ Հ. Աճառյանի (ՀԱԲ, 12, էջ 488) պահպանվել է Խարբրդի բարբառում «ոլոք» իմաստով: Է. Լիդենը⁶ համեմատում է լիավ. bām̄balas «կարճ ու հաստ. թզուկ», նորվ. bembel «պորտ», շվեդ. bamb «փոք», ko-bomba «գեր կով», bām̄ba, միջ. վերին գերմ. bemstīn «հաստափոր կին» բառերի

⁴ Г. А. Климов, Этимологический словарь картвельских языков, М., 1964, էջ 120:

⁵ В. М. Иллич-Свитыч, Опыт сравнения ностратических языков, II. М., 1976, էջ 18:

⁶ E. Lidén, Armenische Studien, Göteborg, 1906, էջ 41:

հետ, որ, սակայն, չի ընդունում Հ. Աճառյանը: Է. Լիդենի աշխատությունը լույս տեսնելու ժամանակ չեն եղել հնդեվրոպական լեզուների ծավալուն և համեմատաբար վստահելի այնպիսի ստուգարանական բառարաններ, ինչպիսիք են Ա. Վալդեի ու Յ. Պոկորնու «Հնդեվրոպական լեզուների համեմատական բառարանը», և մանավանդ Յ. Պոկորնու՝ արդեն հիշված «Հնդեվրոպական ստուգարանական բառարանը»: Այս բառարաններում է. Լիդենի կողմից բերված բառերը դրված են *ba^xmb-, *bha^xmbb-, *pa^xmp-, *pha^xmph- բնածայնական արմատի տակ, ընդ որում a ձայնավորման հետ միասին հանդիպում են նաև այլ ձայնավորմամբ բառեր: Այսպես, լիտվ. հիշյալ bambalas-ի կողքին հանդիպում են buimbalas, buimburas «գլխիկ, բողբոջ, գնդակ», biimbalas «կլոր բան, մեծ հանգուլց», bumbólas «թուկի վրայի մեծ հանգուլց, ուռուցք», լատվ. baĩmba, buĩmba «գնդակ, գունդ», bumbulis «պալար, հանգուլց, ելունդ», buĩmbur «գունդ, գնդակ, կարտոֆիլ» և այլն բառերը: Սրանք և ցեղակից մյուս ձևերը հիմք են տալիս ճիշտ համարելու է. Լիդենի ստուգարանությունը: Սրանով իսկ բավե բառը և փամփուշտ-ի փամփ բաղադրիչը (փամփուշտ = փամփ + բուշտ) ծագում են միևնույն արմատի հնչունական տարբերակներից:

Խալար

Հայ հին մատենագրության մեջ V դ. սկսած լայնորեն գործածվող այս բառի բուն իմաստն է «մութ, մթություն»: Արդի գրական լեզվում բառն ունի ոճական ոլորտ երանգ և ցույց է տալիս մթության սաստկացված աստիճան՝ անթափանց, ուժեղ մթություն: Հ. Հյուբշմանը⁸ և նրա հետևողությամբ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 2¹, էջ 351) այն համարում են իրանական փոխառություն, բայց որոշ կասկածով: Կասկածի տեղիք է տալիս այն, որ, նախ՝ պոսկ. xavar-ի և իրանական զուգահեռ այլ բառերի բուն իմաստն է «արևմուտք» («մութ, խավար» իմաստը լուկ ենթադրվում է), և երկրորդ՝ հայերեն բառը շատ հին և շատ գործածական է: Այս կապակցությամբ Հ. Աճառյանը, բերելով համապատասխան իրանական ձևերը, գրում է. «Բուլորն էլ նշանակում են «արևմուտք». պոսկի բառը կարող էր ունենալ «մութ, խավար» նշանակությունը. նշանակության զարգացման համար հմտ. արաբ. maṣrāb «արևմուտք», որից խալարի բարբառով՝ մեղաբ «մութ, խավար»: Թեև Հյուբշման, էջ 159, դժվար է գտնում այսպիսի հին և շատ գործածական մի բառ պոսկերենից դնել փոխառյալ, բայց եթե ընդունինք խավարը իբրև կրոնական գաղափարի արտահայտություն, փոխառությունը այլևս տարօրինակ չի թվի»⁹:

Ատորև հարկ ենք համարում խալար բառի իրանական ծագումը հավաստել երկու փաստարկով:

1. Դ. Մոնչի-զադեն «Շահ-Նամեի» պատմատեղադրական հարցերին նվիրված իր գրքում, այդ էպիկական ստեղծագործության մեջ տեղ գտած պատկերացումների վերլուծության հիման վրա հանգում է այն եզրակացու-

⁷ A. Walae, J. Pokorny, Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen, 1—3, Berlin, 1928—1932.

⁸ H. Hübschmann, Armenische Grammatik, 1, Leipzig, 1895, էջ 159:

⁹ Իմաստի անհամապատասխանությունն է հիմք տվել խալար-ը կապելու -r-s)keu- «ծածկել, պատել, փաթաթել» արմատի հետ (Պատրուբանի, Պոկորնի և այլն):

թյանը, որ xavar(an) բառը ցույց է տալիս ոչ միայն ննդ առումով արևմուտքը, այլև «ստորերկրյա աշխարհի (Unterwelt) ողջ շրջանը (Zone), որի սկիզբը արևմուտքում է և վերջը՝ արևելքում. խափարի այս ստորին աշխարհը, որի մեջ արևը երեկոյան սուզվում է և որից առավոտյան դուրս է ելնում, կոչվում է հենց xavar(an) = արևմուտքի շրջան (Zone)»¹⁰:

2. Իրավացի է Հ. Աճառյանը, որ առարկելով Հ. Հյուրշմանին, շեշտում է խառն բառի կրոնական երանգը՝ Հետաքրքրական է, որ այդ բառը բարբառներում առանձին գործածությամբ մուտք է գործել հենց կրոնական լեզվից և նշանակում է «ավագ ուրբաթ գիշեր», և որ գրական լեզվում այն հատուկ չէ ժողովրդական-խոսակցական ոճին:

Կաղաւել

Այս բառը առաջին անգամ հանդիպում է Դավիթ Անհաղթին վերագրվող երկերից մեկի (Հ. Աճառյանը այն բերում է «Հարցուածով պիտառութիւն» խորագրով՝ հենվելով «Նոր հայկազյան բառգրքի» վկայությունների վրա)՝ հետևյալ հատվածում. «Կամ նույն իսկ օձից ազգ, որ ի ջերին աւուրսն չար ի գազանութիւն յանդգնի և արեգական ի հարաւ խոնարհեցելոյ՝ կաղաւէ»: Ավելի ուշ՝ հայոց լեզվի զարգացման միջին շրջանում, հանդիպում է կաղաւիլ ձևով Պողոս Տարոնացու «Թուղթ ընդդէմ Թէոփիստեայ հոռոմ փրկսոփային» աշխատության մեջ՝ գրված 1122 թ. (հրատ. Կ. Պոլսում 1752 թ.). «Օձ ի ջերմանալ աւուրցն այրի գազանութեամբ և ի ցուրտ աւուրցն կաղուի և լինի իբրև զմեռեալ»: Այս բառը հանդիպում է այլուր նաև կղաւիլ, կաղաւեալ ձևերով:

«Նոր հայկազյան բառգրքում» կաղաւել-ը համարված է բառ անյայտ» և մոտավորապես մեկնված «թողուլ զկատաղութիւն, կամ կաղանալ, թուլանալ, գալարիլ և թմրիլ»: Հ. Աճառյանը մեկնում է. «ձմեռը օձի սառիլ՝ պաղիլ՝ թմրիլը» և միացնում կղաւիլ, կաղաւիլ ձևերի հետ: Սա հաստատելու համար նա նշում է բարբառային կաղաւիլ (կաղվիլ) «ցրտից սառչել, ընդարմանալ» (Ակն, Չենգիլեր), այլև կաղիլ «սառիլ» (տեղը և վկայությունը անհայտ են) բառերը: Այս բոլորի հիման վրա Հ. Աճառյանը կաղաւել-ը բխեցնում է հ.-հ. *gel(ə)- «ցուրտ, սառչել» արմատի *ցլ- ձայնդարձային տարբերակից (ՀԱԲ, 22, էջ 495):

Կաղաւել-ը, անշուշտ, կապված է բարբառային կլապաւիլ «կլորիկ մը ծալիլ նստիլ» (Չենգիլեր) բառի հետ¹¹: Նրանց հարաբերությունը մոտավորապես նույնն է, ինչ թաւալել և Թապալել բառերինը, ընդ որում կլապաւիլ-ն ունի նաև -տ ածականը: Կաղաւել բառի բոլոր վկայությունները խոսում են ավելի շատ «կծկվել», քան «սառչել» իմաստի մասին, թեև վերջինիս առկայությունը հաստատվում է կաղվիլ, կաղիլ բառերի գոյությամբ: Մեր «Հայ բարբառագիտության ներածության» մեջ (էջ 286 և 287) մենք կաղվիլ «սառչել» բայի համար ընդունել ենք Հ. Աճառյանի ստուգաբանությունը, իսկ կլապաւիլ-ը՝ բխեցրել ենք հ.-հ. մի այլ՝ *gei- «գնդ(վ)ել, սեղմ(վ)ել» արմատից: Վերջինիս *ցլեթ(h)- ձևից (հիմտ. լատ. <գալլ. galba) կարող էր ծագել կաղաւ-ը, *ցլեթ- ձևից էլ կլապ-ը: Սակայն «սառչել» իմաստն ունեցող ձևերի առ-

¹⁰ D. Monchizadeh, Topographisch-historische Studien zum iranischen Nationalpos, Wiesbaden, 1975, էջ 170:

¹¹ Հ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 572:

կայությունը խոսում է երկու արմատների խառնման (կոնտամինացիայի) մասին, եթե չենթադրենք, որ հայերենը պահպանել է այդ արմատների հնագույն իմաստային կապի վկայությունը:

Կափարում

Այս բառը մեկ անգամ գործածված է Կորյունի «Առ ի մէջ հարքն ի կափարումս դարձան» արտահայտության մեջ: Բառարանները տալիս են «գերեզման» իմաստը: «Նոր հայկազյան բառգիրքը» (Ա, 1836, էջ 1079) լծորդում է ֆաուրան բառի հետ՝ սրանց հարաբերության համար բերելով արաբ. ղըֆը «քաւել», ղաֆիր «կափուցանել», եբր. ֆեֆօրիւ «քաւութիւն, քաւարան» ձևերը, իսկ քաղեմ բառի կապակցությամբ (Ա, էջ 794) նշելով եբր. զաւար-ը՝ հղում է կափարում-ին: Հ. Աճառյանը (ՀԱԲ, 22, էջ 569) այս զուգահեռները բերելով անհավաստի ստուգաբանությունների մեջ, պատահական է համարում նաև կափարում-ի՝ սանսկր. gābhira «խոռոչ, փոս» և պրսկ. gāpāra «քարայր», արաբ. qabr «գերեզման» և ասոր. qabūrā «գերեզման» բառերի հետ ունեցած նմանությունը:

Կափարում բառի հազվագիպ գործածությունը ցույց է տալիս նրա փոխառյալ լինելը և այն էլ գրական աղբյուրից: Ձևով այս բառը եբրայական է թվում (հմմտ. արմատի եռաբաղաձայնությունը) և հավանական է նրա ծագումը եբր. gabar «թաղել» բայից կազմված գոյականից. այս դեպքում արաբ. և ասոր. բառերի հետ ունեցած նմանությունը պատահական չի լինի, այլ կբացատրվի այդ բառերի՝ եբրայական բառի հետ ունեցած ծագումնաբանական կապով:

Կռյս

Մատենագրության մեջ V դ. սկսած վկայված և արդի գրական լեզվում գործածական այս բառը հանդես է գալիս գոյականաբար և ածականաբար. առաջին դեպքում նշանակում է «չամուսնացած աղջիկ» (ռուս. девственница), երկրորդ դեպքում՝ «մաքուր, անփորձ, ողջախոհ» (և՛ աղջկա, և՛ տղայի մասին): Եղած ստուգաբանությունները հեռու են հավանական լինելուց¹²:

Եթե ճիշտ է Հ. Գյուտերբուխի կարծիքը խեթ. kūsā-ի (ինչ-որ ազգակցի անվանում)¹³ «հարսնացու» և Օ. Գուլենիի կարծիքը ԼՍ kūsā-ի «փեսա, հարուստ մարդ» նշանակելու մասին¹⁴, որ ստուգաբանորեն փորձում է հաստատել Յ. Վյատենբերգը¹⁵, ապա հայերեն բառը կարող է անմիջական կամ միջնորդված փոխառություն լինել խեթերենից կամ ցեղակից որևէ լեզվից (հայասերենից):

Հեծալ

Այս հին մատենագրության մեջ V դ. գործածված այս բառը նշանակել է «ծառի բուն. առաստաղի գերան. բիր, ծծծելու փայտ. խաչի գավազան»: Գործածական է արդի քրդական լեզվում: Պահպանվել է արևմտահայ որոշ

¹² Հմմտ. ՀԱԲ, 22, էջ 530.

¹³ „Revue hittite et asianique“, 53, 1956, էջ 23—24. Տե՛ս նաև J. Friedrich՝ Hethitisches Wörterbuch, Heidelberg, 1952—1954, էջ 120.

¹⁴ „Annals of archaeology and anthropology“, 28, 1948, էջ 43.

¹⁵ „Indogermanische Forschungen“, 80, 1975, էջ 66—70.

քարբառներում «հաստ գերան» իմաստով: Հավանաբար, սրանից է կազմված հեծանոց «հոսելի, եղան» բառը, որ Հ. Աճառյանը դնում է առանձին: Հ. Հյուբշմանը և Հ. Աճառյանը իրավացիորեն մերժում են հեծան-ի պհլ. (h)ezam «վառելափայտ» և ցեղակից իրան. այլ ձևերի հետ կապ ունենալու վերաբերյալ կարծիքը: Վերջինս ծագում է հ.-բ. *sed- «նստել» արմատից (*sed-s- կամ *sedl-), որից ծագում են նաև նստիմ, ետղ (տեղի), ոստ (*o-zd-o-) բառերը: Ոստ բառի ստուգաբանական իմաստն է «ծառաբնին նստած»: Դժվար չէ հեծան բառի մեջ տեսնել սկզբնական նույնատիպ իմաստ՝ «նստատեղ, հիմք» լայն իմաստից «ծառաբուն, որին նստած են ճյուղերը» և «գերան, որին նստած է առաստաղը»:

Հունչ

V դ. հանդիպող այս արմատը գործածվում է ինչպես առանձին (հմմտ. հնչիւթ ձեւը), այնպես էլ որպես բայահիմք (հնչել)՝ համապատասխան ածանցյալներով (հնչիւն, հնչումն և այլն): Ս. Տերվիշյանը և, նրանից անկախ, Ա. Մեյլեն համեմատում են հ.-բ. *syen- «հնչել» արմատից ծագող բառերի հետ՝ -չ-ն համարելով աճական՝ ծագած շունչ-ի ազդեցությամբ: Սակայն *sy-ն հայերենում տալիս է ֆ: Թերևս այս պատճառով Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3². էջ 123) հունչ-ը դիտում է իբրև հայերենի ինքնուրույն բնաձայնական կազմություն՝ բերելով շնչել, բնչել, գնչել և այլն շարքը:

Եթե նկատի առնենք, որ հ.-բ. *syen- արմատն ունի *sen- տարբերակը (հմմտ. լատվ. sanēt, senēt «բզզալ», հռլ. sanas «շշնջյուն», կիմր. hanes «պատմություն» < «լուր, համբավ»), ապա հունչ-ի բխեցումն այս արմատից հավանական կլինի՝ հուն(-չ) < *son-: Հնարավոր է ենթադրել նաև *syen-ի ստորին աստիճանի ձայնդարձ՝ *sun-: Ավելորդ չենք համարում նշել, որ Հ. Աճառյանն ընդհանրապես զգալիորեն չարաշահում է հայ բնաձայնությունների ինքնուրույն կազմություններ լինելու իր տեսակետը՝ հենվելով 1889 թ. ժՀանդես ամսօրյայում իր տպագրած հոդվածի վրա և անտեսելով ցեղակից լեզուների տվյալները:

Մագիդոն (մագիզոն, մագիդոն)

Այս բառը հանդիպում է Երեմիա Մեղրեցու բառարանում, ընդ որում Հ. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» (3², էջ 220) տալիս է մագիդոն ձևը, իսկ Հ. Ամալյանի քննական հրատարակության մեջ ըստ այբբենական կարգի ճիշտ է համարված մագիզոն ձևը (այն հանդիպում է մագիլ բառից առաջ)¹⁶:

Նկատի ունենալով Երեմիա Մեղրեցու բառարանում տեղ գտած շատ բառերի աղավաղված լինելը և մագիդոն ձևի վերականգնման հավանականությունը՝ այս բառի աղբյուրը կարելի է համարել հուն. Μαγίδος, սեռ. -ιδος բառը, որ տասներկուադյա (տասներկուլարյա) երաժշտական գործիքի անուն է: Այս բառի հետ ստուգաբանորեն կապված են Μαγας, -αδος և սրանից

¹⁶ «Բառակիրք հայոց», Երևան, 1975, էջ 204:

կազմված լաչաօօ՛ր բառերը, որոնք նշանակում են լարային գործիքների լարերի տակ դրվող փայտե նեցուկը: Հունարեն բառի ծագումն անհայտ է (Ի. Լեին ենթադրում է սեմական ծագում)¹⁷: Ինչպես հայտնի է, տավիղը տասնադյա քնարն է, և նրա անունը կարող էր ծառայել որպես մագիղոն բառի բացատրություն:

Մածառոս

Այս բառն առանձին գործածված է Երեմիա Մեղրեցու և Նորայր Բյուզանդացու բառարաններում¹⁸, առաջինում «սպասաւոր» մեկնությամբ, երկրորդում՝ «խոհարար» իմաստով: Առաջմ հայտնի է մատենագրական միայն մեկ վկայություն՝ Սմբատ Սպարապետի պատմության մեջ. «Եղև զարմանալի նշան ի բերդն սորա Վահկայն. ցոլաց կայծակն ի մաժառոստանն եզարկ զարծաթի սինին և տարաւ ի տանն մէկ այլ կողմն»¹⁹: Այս դեպքը պատմում են և ուրիշները, բայց առանց հիշյալ բառի դեմ որևէ այլ բառ դնելու: Սմբատ Սպարապետի՝ Մոսկվայի հրատարակության մեջ մածառոստանն ձևի դիմաց տրված է Մանաւիտան հատուկ անունը (=Հունգարիա): Փարիզյան հրատարակության մեջ Կ. Շահնազարյանը 38-րդ ծանոթության մեջ բառը համարում է «անճոռնի տառադարձություն մայեռ դոմ (=ֆրանս. major-dome Եարքայի ծառաների գլխավորը, ծառայապետ)» բառի: Հ. Աճառյանը (ՀԱԲ, 32, էջ 224) ստուգաբանության որևէ փորձ չի կատարում:

Մածառոս բառը ակնհայտ փոխառություն է, որի աղբյուրն է հունարեն լաչիւօ՛ճ «խոհարար» բառը՝ չ-ի միջնադարյան ժ արտասանությամբ. հմմտ. մածիստոս, մածիստոս (մագիստրոս), պածիտ (հուն. παγίς, -ίδος «ծուղակ») և այլն: Մածառոստուն-ը այս դեպքում նշանակում է «խոհանոց»:

Յաղել

Այս բառը մեկ անգամ գործածված է Մխիթար Ապարանցու (XV դ.) «Տրամախոսութիւն կամ վիճաբանութիւն ի վերայ հաւատոյ և կրօնից» աշխատության «Կետոսն յաղեաց զՅունան» նախադասության մեջ: «Նոր հայկազյան բառգիրքը», կապելով թուրք. ձյ «ուռկան, ցանց» բառի հետ, մեկնում է «ուռկանել, ըմբռնել», իսկ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 32, էջ 379) տալիս է «կլանել, կռլ տալ» իմաստը: Խոսքը վերաբերում է «նոր կտակարանի» այն ավանդությանը, թե իբր Հովնան մարգարեին կետը կլանել է, և նա անցկացրել է «ի փոք կիտին զերիս տիւս և զերիս գիշերս» (ԺԲ, 40): Ակնհայտ է, որ «ուռկան» իմաստի հետ կապելը կեղծ ստուգաբանության արդյունք է, և բայը պետք է մեկնաբանել «բռնել» կամ «կլանել»: Այս դեպքում անհնար չէ յաղել արմատը բխեցնել հ.-ե. *sel- «բռնել» արմատի ստորին ձայնդարձ ունեցող *s|- ձևից (հնարավոր է ենթադրել նաև *sel-, *səl- ձևեր): Այստեղից են ծագում հուն. ἐλαίν «վերցնել, բռնել, տիրել», ἑλωρ «ավար», հ. իռլ. selb, կիմբ. helw «տիրապետություն» բառերը և այլն:

¹⁷ Հմմտ. H. Frisk, Griechisches etymologisches Wörterbuch, II, Heidelberg 1970, էջ 154.

¹⁸ «Բառգիրք հայոց», էջ 204, Նորայր Բյուզանդացի, Բառգիրք ի զաղդիերեն լեզվի ի հայերեն, Կ. Պոլիս, 1881, էջ 333 ա:

¹⁹ «Սմբատայ Սպարապետի եղբոր Հեքմայ Ս. Աբխայի Հաւոց Պատմութիւն», Մոսկվա, 1856 (նույնը՝ «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի», Փարիզ, 1859, էջ 88):

Շեղամեղա

Հայ մատենագրության մեջ սակավագույն այս բառը նշանակում է *սցոփ*. խենեշ. թույլ, մեղկ, ժույլ» և ըստ Հ. Աճառյանի (ՀԱԲ, 3², էջ 509) «կրկնված է անծանոթ շեղա բառից»։ «Նոր հայկազյան բառգրքում» շեղա-ը ստուգաբանորեն կապվում է շեռա-ի հետ, բայց նմանությունը պետք է պատահական համարել։ Շեղամեղա-ը հանդիպում է նաև շեղամեղա, շեղմեղա, շեղամեղկ գրություններով. բոլոր դեպքերում էլ առկա է շեղ(ա)- բաղադրիչը։ Ինչպես հայտնի է, հայ. շ-ն կարող է ծագել *skh, *k'վ կապակցություններից, և շեղ(ա)-ը թերևս հանգում է հ.-ե. *(s)kel-ի *skhel- տարբերակին. Զ. Պոկոնին այս արմատի համար վերականգնում է «չորանալ, ցամաքել. չորացնել» իմաստը, որից ծագում են միջ. անգլ. schalowe «անհամ. թույլ, ծանծաղ», միջ. վերին գերմ. hel(-ll) «թույլ», hellec «հոգնած» և այլն²⁰։

Ոստ, ոստայն, ոստնուլ

Ոստ «ճյուղ» բառի ծագումը հայտնի է. այն գալիս է հ.-ե. *ozdos ձևից, որ կազմված է *o- մասնիկով (ամոտ, հետ, միասին, վրա) *sed- «նստել» բայից՝ «ծառարնի վրա նստած» նախնական իմաստով։ Հայերեն բառի հետ կազմությամբ և իմաստով նույնն են հուն. ὄσος, գոթ. asts, հին վերին գերմ. ost, գերմ. Asi «ճյուղ» բառերը։ Հայերեն բառը բարբառներում ունի «ճյուղը կտրելուց հետո ծառի վրա մնացած մաս» իմաստը²¹։

Կարծիքներ են հայտնվել ոստ-ի՝ ոստնուլ «ցատկել» և ոստայն «շուկահար» բանվածք. ոստայնականության գործիք» բառերի հետ ունեցած կապի մասին, թեև Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3², էջ 569) այդ բառերի ոստ- արմատները տարբերում է և դնում առանձին։ Սակայն այս դեպքում Հ. Աճառյանի զգուշությունն ավելորդ է։ Իմաստային նման զարգացումը սովորական է։ Ոստ «ճյուղ» բառի և ոստնուլ-ի ոստ ու ոստայն-ի ոստ արմատների կապը ակնհայտ է դառնում, երբ նկատի ենք առնում մի կողմից՝ նույն *sed- արմատից ծագող և ուրիշ լեզուների պատկանող բառերի իմաստային համատիպ անցումները, մյուս կողմից՝ շատ բարբառներում պահպանված ձևերի արտահայտած իմաստները։ Գերմաներենում *sed- արմատից ծագող Satz բառը, բացի սկզբնական «դրվածք, նստվածք, հաստվածք» և սրանց հիման վրա զարգացած «դրույթ. սահման. դրույթ, օրենք. հավաքածու. շարվածք. նախադասություն» իմաստներից ստացել է նաև «ոստյուն, ցատկ, թռիչք» իմաստը։ Նույն արմատից ծագող գերմ. setzen բայը ունի «դնել. դարսել. շինել. հիմնել» իմաստները, որոնք պարզում են ոստայն բառի և սրա բարբառային ոստան «գորգ գործելու փայտյա շինվածք» ձևի իմաստային անցումը, մանավանդ, եթե նկատի առնենք սկզբնական *ozdos ձևի *o-մասնիկի հավելական իմաստը (ամոտ, կից, հետ, միասին, վրա)։ Հմմտ. նաև հեծան «ծառի բուն. առաստաղի գերան» բառի ստուգաբանությունը, որով այն կապվում է նույն *sed- արմատից ծագող հեծանեմ բայի հետ։

Սերկ

Այս բառը հանդիպում է հատկապես հունաբան հեղինակների երկերում և ունի «այսօր» իմաստը։ Սրանից են կազմված սերկեան «այսօրվա», սեր-

²⁰ IEW, էջ 927.

²¹ ՀԱԲ, 5, էջ 534—535.

կաձին «այսօրածին» բառերը: Բառի կազմության մթազնման հետևանք պետք է համարել սերկ-ս այժմ, հիմա, արգ բառաձևը, որտեղ առկա է, ինչպես կտեսնենք, միևնույն ցուցական տարրը՝ -ս հոգի ձևով: Նշելով, որ սերկ բառը կենդանի է Հավարիկի իսէկի, իսէրկի «այսօր», իսկէլի «այժմ» ձևերում՝ 2. Աճառյանը (ՀԱԲ, 6, էջ 199) եզրակացնում է, որ «սերկ բառը հունաբանների ձեռքով շինված կեղծ մի ձև չէ, այլ բնիկ ժողովրդական»:

Սերկ բառի ստուգաբանության եղած փորձերը (ցերեկ բառից կամ այս երեկ կապակցությունից) անհավանական են:

Նկատի ունենալով, որ «այսօր» նշանակող բառերը սովորաբար կազմված են միևնույն բաղադրիչներով (հմմտ. հայ. այսօր, ռուս. сегодня, գերմ. heute<hlutagu և այլն), կարելի է սերկ-ի մեջ տեսնել հին «այս» և «օր» բաղադրիչները: Եվ իրոք. առաջին՝ *ս(ե)- բաղադրիչը դալիս է հ.-ե. *k'e- «այս» (հմմտ. այ-ս, ս-ա, սո-յն, -ս, որոնք ծագում են *k'e-, *k'o- ձևերից), երկրորդ՝ (ե)րկ բաղադրիչը՝ հ.-ե. *dyl- ձևից, որ ներկայացնում է *dl- ձևի տարբերակը. վերջինից ծագում է հայ. տիւ «օր» բառը: Այս ստուգաբանությունը հաստատվում է է. Աղայանի կարծիքը երկին բառի՝ միևնույն dyl- հիմքից ծագելու մասին²². Թեև *dl- > *dyl- անցումը օրինաչափ չէ, բայց այն կարող էր կատարված լինել հայերենում: Այսպիսով, տիւ և երկայն, երկաւ բառերի միջև առկա է նույն հարաբերությունը, ինչ տիւ և (ե)րկ «օր», երկին բառերի միջև (կարելի էր այստեղ էլ ենթադրել երբեք ձայնդարձ՝ Schwebelaute, բայց այն, սովորաբար, հնարավոր է համարվում լիաձայն ձևերի համար):

Սերտ

V դ. ավանդված և բարբառներում տարածված այս բառը նշանակում է՝ 1. պինդ, ամուր, կարծր. 2. հոծ, խիտ, թանձր. 3. մերձավոր, մոտ, կից. 4. հարազատ. 5. ստույգ, հավաստի: Սերտել բայը նշանակում է «ամրացնել, պնդացնել, հաստատել»: Բարբառներում, բացի «պինդ», «խիտ», «թանձր» իմաստներից, ունի նաև «թարմ, առույգ, քաջառողջ», «դասը լավ սովորած» իմաստները. սերտել բայը արդի գրական հայերենում ստացել է վերջին՝ «դասը լավ սովորել» (*ամրում ամրացնել) իմաստը:

Եթե մի կողմ թողնենք թրք. sert «ամուր, պինդ» (սնոր հայկազյան բառգիրք», Հ. Թիրաքյան) և շումեր. sir «կապել» բառերից բխեցնելու փորձերը, որոնք զուրկ են պատմական հիմքից, ապա կարելի է նշել հնդեվրոպական զուգահեռների գտնելու փորձերը՝ 1) լատ. certus «ստույգ» (սնոր հայկազյան բառգիրք»), 2) հայ. սեռն (սնոր հայկազյան բառգիրք)՝ հ. հնդկ. sarta- «հաստատություն, ամրություն» բառի հետ միասին (Ս. Տերվիշյան), 3. հուն. ἄσπετος «ուժեղ», գոթ. hardus «խիտ, ամուր, ուժեղ» և այլն (Մյուլլեր)²³. Հ. Հյուբշմանը և, նրա հետևողությամբ, Հ. Աճառյանը իրավամբ մերժում են վերջին կարծիքը՝ նշելով հնչյունական բացահայտ անհամապատասխանությունը (հ.-ե. *k-ն հայերենում ս չի տալիս): Համեմատությունը certus-ի հետ (հ.-ե. *ker- «կտրել») նույն հիմունքով նույնպես պետք է մերժել: Ս. Տերվիշյանի նշած սանսկր. sarta- բառը ծագում է հ.-ե. *ser- արմա-

²² է. Բ. Աղայան, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 65—67:

²³ Հմմտ. ՀԱԲ, 6, էջ 203:

տից, որ չէր կարող հայերեն սեր- տալ (հ.-հ. *s > հայ. հ կամ դրո): Ավելի հավանական է հայ. սեռն բառի հետ կապելու փորձը, որ, թերևս իմաստային հիմունքով, չի ընդունում Հ. Աճառյանը: Սեռն «1. զուտ, անխառն, պարզ, մաքուր. 2. սերտ, հոծ, պինդ, խիտ» (այլև սեռել «պնդացնել, ամրացնել», սեռնիլ «լցվել, խտանալ») բառը սեռ, սեր, սերունդ, սերմն բառերի հետ միասին հ.-հ. *k'er- «աճել. աճեցնել, սնել» արմատից է բխեցնում նաև Ա. Մեյեն²⁴, որ, սակայն, ոչինչ չի ասում սերտ-ի մասին: Վերջինս իմաստով և ձևով իրոք կարելի է կապել սեռն բառի հետ և բխեցնել *k'er- արմատից՝ *-d- աճականով (*k'erd < սերտ): Հմմտ. հատկապես նույն արմատին պատկանող լատ. creō, -āre «ստեղծել. հիմնել», creber (*krē-dhros) «խիտ, հոծ, թանձր»:

Սիմ

Այս բառը հանդիպում է միայն Երեմիա Մեղրեցու բառարանում (1698)²⁵, որտեղ բացատրված է «կոթող»: Այս ձևով էլ մտել է Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» մեջ (հ. 6, էջ 228): Մեկնաբանության և ստուգաբանության որևէ փորձ չի կատարված: Նշելի է միայն, որ բառարանի ձևագրերից մեկում ավելացված է. «սիմ. կոթող, կամ դուխօղ, կամ լեռուն»:

Եթե սիմ բառն առնված է որևէ բարբառից, ապա այն կարող է ծագել հ.-հ. *k'em- «ձող, փայտ. եղջյուր» արմատից և այս դեպքում կապվում է սամի-բ բառի հետ: Հետաքրքրական է նշել, որ Հ. Աճառյանը, խոսելով սամի-բ բառի ծագման մասին, գրում է. «*k'em- պիտի տար *սիմ», և սամի-բ ձևը բխեցնում է կամ *k'ēmīā, (Հ. Հյուբշման), կամ *k'em-ի համար Յ. Պոկոնու տված երկրորդային *k'am- ձևից: Հայերեն բառի համար կարելի է ենթադրել նաև իրանական որևէ աղբյուր, բայց ավանդված՝ ավեստերենի sīmā- «ձիու խամութ», պրսկ. sīm- «սամի» բառերը իմաստով շատ հեռու են:

Տաղտ, տաղտապել, տաղտել

Սրանցից առաջինը տաղտուկ «ձանձրալի. ձանձրույթ» բառի արմատն է, որ առանձին գործածված է միայն փոխաբերական առումով՝ «հղի կնոջ արտակարգ ցանկություն» իմաստով: Պահպանվել է տաղտկ(ան)ալ բայի սկզբնական՝ նյութական իմաստով գործածության վկայությունը՝ «չդիմանալ, ճկոել», («ընկճվել» > «տաղտկանալ, ձանձրանալ»)՝ «տաղտկացեալ ծանրութեամբն» արտահայտության մեջ²⁶: Ստուգաբանության եղած փորձերը՝ համեմատությունը աղտ, ախտ բառերի, այլև թրք. dağdağ «հոգս, նեղություն» բառի հետ հիմնավոր չեն, մանավանդ որ տաղտուկ-ը և նրանցից կազմված ձևերը հանդիպում են V դ. սկսած: Հ. Աճառյանը (ՀԱԲ, 6, էջ 757—758) պատահական է համարում նաև ասոր. talet «ծուլանալ, դանդաղել, հապաղել», taiaia «հեղձ, դանդաղաշարժ» բառերի հետ ունեցած նմանությունը:

²⁴ A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, 2-e éd., Vienne, 1936, էջ 141 (նշվում է հատկապես լատ. creō, -āre բայը):

²⁵ «Բառգիրք հայոց», էջ 288:

²⁶ ՀԱԲ, 6, էջ 757:

Անհավանական չէ տաղա-ի համեմատությունը հին. անգլ. *tealt* «ան-կայուն, երեբուն», անգլ. *tilt* «թեք(վ)ել, ծռ(վ)ել, շուռ տալ (շուռ գալ)» և այլն բառերի հետ, որոնք ծագում են հ.-ե. **del-* «երերալ, օրորվել» արմատից՝ **-d-* ածականով. հայերենի համար կարելի է ենթադրել **ũj-d-* նախածին: Կան նաև առանց ածականի և **-t-* ածականով ձևեր՝ հ. հնդկ. *duṣā* «օրորվող», *do:ayate* «օրորվում է, տատանվում է», -*ti* «օրորում է, պտտում է», լիտվ. *deisiti* «հապաղել», *dūlinėti* «քարշ գալ»: Հայերեն տաղա-ը սկզբնական իմաստով (շղիմանալ, ճկոել) < **երերալ*» կապվում է հ.-ե. արմատի հետ. այդ իմաստը ավելի լավ պահպանված է Առձեռն բառարանի ավանդած անտաղանի «հաստատուն, անշարժ, աներեր» բառի մեջ, որի հիման վրա Հ. Անաոյանն առանձնացնում է տաղտել «շարժել» բայը: Անհնար չէ, որ Հ. Անաոյանի՝ այս բայի կապակցությամբ հիշած աղել «շարժել» (որից անտղելի «անշարժ») բայը պատկանի այս արմատին²⁷:

Հավանական է տաղտուկ-ի հետ կապել նաև տաղտապեմ «ենդել, շարշարել», լատաղապիմ «ենդվել, շարշարվել») բայը, մանավանդ որ հանդիպում է նաև անտղապիմ գրությունը:

Անիսադ (Anisades)

Այս անձնանունը հայտնի է մի դրամի վրա արված *Δανῖς*. *Ἀνισάδης* մականագրությունից: *Δανῖς*-ն մեկնաբանվում է որպես *Δανειῖς* (Ջարիադրես) և նույնացվում Ծովքի թագավոր *Ջարեհի* հետ: Ըստ ոմանց, Անիսադը *Ջարեհի* որդին է, ըստ այլոց՝ *Ջարեհի* հայրը²⁸, Հ. Անաոյանը համարում է անվան ծագումն անհայտ²⁹:

Հայտնի է, որ -*σαδης* (-*σατις*) բաղադրիչը ներկայացնում է իրանական *šāt*-ի (ավեստ. *šyatay*, *šatay*-, նոր պրսկ. *šād*- «ուրախություն» < հ.-ե. **k̥s̥i-* *to-*)՝ ունական գրածը. այսպես, թրակյան *Seuthes* թագավորի հոր անունը՝ *Μαι-σαδης* համարվում է իրանական ծագման, և երկրորդ մասը մեկնաբանվում հիշյալ ձևով³⁰: Այս դեպքում անունը պետք է համարել իրանական ծագման և սկզբնական ձևը համարել Անիշադ (Անիշատ): Առաջին բաղադրիչի համար հմմտ. *Ἀνισαδης* անձնանունը, որ կրել է խոսքով *I*-ի զորապետներից մեկը. այն մեկնաբանվում է որպես հին պրսկ. *a'ān-bēd* «ծի-ապետ, արարողապետ»:

Այսպիսով, Անիսադ անունն իրանական ծագում ունի և պիտի նշանակած լինի «ծիսուրախ»:

²⁷ Հ. Անաոյանի (ՀԱԿ, 6, էջ 926) աղել-ի և սրան միացվող տաղել-ի հիման վրա վերականգնած հ.-ե. արմատի (**dil-*) գոյությունը խիստ կասկածելի է, մանավանդ որ հայերենի հետ համեմատվող միակ հուն. *δελνίζω* «բազմանշանակ նայել, աչքով անել» բայը իմաստով շատ հեռու է:

²⁸ Հմմտ. F. Justi, *Iranisches Namenbuch*, Marburg, 1895, էջ 16.

²⁹ Հ. Անաոյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, Երևան, 1942, էջ 166.

³⁰ Հմմտ. F. Justi, նշվ. աշխ. էջ 188, D. Detschew, *Die thrakischen Sprachreste*, Wien, 1957, էջ 282.

ЭТИМОЛОГИИ

ГЕВОРК ДЖАУКЯН

Академик АН Арм. ССР

Резюме

В статье дается этимология следующих армянских слов: *aṭb* „экскременты, мусор; (диал.) удобрение“ (и.-е. *sṛp- от *selp-; ср. хетт. *šalpa* „экскременты“), *buṃb* „икра (ноги)“ (и.-е. *bhumbh- при *bhambh-; ср. лит. *buṃbugas* „почка, утолщение“); *xaṃag* „мрак, темнота“ (<иран.; ср. н. перс. *xaṃag* „запад, западная зона, зона мрака“); *kaṭawel* „свернуться в комок“ (от и.-е. *gel- „сжиматься“ при *kaṭawel* „мерзнуть от *gel- „холодный; мерзнуть“), *kar'agum* „могила“ (<др.-евр.); *koys* „девственный“ (из др.-анатолийского источника; ср. хетт. *kūša* „невеста?“ и *Lūkusa* „зять?“); *hesap* „ствол, балка“ (<и.-е. *sedṣ- от *sed- „сидеть, садиться“); *hunc'* „звук“ (и.-е. *sun- или *son- от *s(u)en-); *magidon* „арфа“ (<греч. *μάγιδις*, *-ίον* „магадида, двенадцатиструнный музыкальный инструмент“); *mazaṛos* „повар“ (<греч. *μάζαρος* „повар“); *yaṭel* „схватывать(?)“ (и.-е. *sṣ- от *sel- „брать, схватывать“); *šetameit* „беспутный, слабовольный, слабый, ленивый“ (и.-е. *skhel- „высушивать, сохнуть“); *ostnui* „прыгнуть“, *ostaṃp* „ткань, ткацкий станок“ (ср. *ost* „ветвь“ из и.-е. *o-zdo-s „ветвь“ от *sed- „сидеть, садиться“); *serk* „сегодня“ (и.-е. *k'edui- „сей день?“); *sert* „крепкий, плотный, густой, частый; близкий; родной; достоверный“ (и.-е. *k'er- „расти, питать“; ср. арм. *serp* „частый; плотный“, лат. *creber* „частый“); *sim* „колонка, столп, памятник“ (и.-е. *k'em- „шест, палка“); *taṭt-uk* „скука, скучный“, *taṭtkanal* „скучать; не выдерживать“, *taṭtapel* „мучить“, *taṭtel* „двигать“ (и.-е. *del- „шататься, качаться“); *Anisad*—личное имя (в греч. передаче *Ἀνισαδης*) иранского происхождения (для *-αδης* ср. авест. *šatay-*, перс. *sad* „радость“).